



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Գ Ի Ր
№ 16/2018

01 հունիսի 2018 թ.

**Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման
պատգամավորական ընտրություններն անցկացնելու մասին**

Հիմնվելով՝

- Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին հռչակագրի, 24 մայիսի 2013 թ.,
- «Արեւմտյան Հայաստանի պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) կանոնակարգի մասին» օրենքի (լրացումներով ու փոփոխություններով ընդունված՝ 29.05.2018 թ.),
- Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 1-ին գումարման 7-րդ նստաշրջանի որոշմամբ, 29.05.2018 թ.:

Հաստատել Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) Նախագահության 31.05.2018 թ. առաջարկները Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններն անցկացնելու նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ, ayt tvum, պատգամավորների ընտրությունների անցկացման ամսաթիվն ու վայրը:

1. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների ընտրություններն անցկացնել համացանցում հետեւյալ հասցեով՝ www.elections-western-armenia.info, 2018 թ. սեպտեմբերի 1-ից, ժամը 00-01-ից մինչեւ 2018 թ. սեպտեմբերի 5-ը ժամը 24:00, Երեւանի ժամանակով:
2. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների թեկնածուների առաջադրումն ու նախընտրական արշավի քարոզչությունը սկսել 2018 թ. հուլիսի 1-ից մինչեւ 2018 թ. օգոստոսի 30-ը:
3. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման պատգամավորների թեկնածուների պաշտոնական գրանցումն իրականացնել 2018 թ. օգոստոսի 1-ից մինչեւ 2018 թ. օգոստոսի 30-ը:
4. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու թեկնածուների առաջադրումը կատարվում է՝
 - քաղաքացու կողմից, ինքն իր թեկնածությունը առաջադրելու միջոցով,

- հայրենակցական ու հայրենասիրական հասարակական կազմակերպությունների եւ միությունների կողմից:

5. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուն պարտավոր է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացնել գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի հետեւյալ ցանկը.

Սահմանված նմուշով՝ ԱՀ ԱԺ պատգամավորի թեկնածուի լրացված հարցաթերթիկ,
Լուսանկար,

Անձը հաստատող փաստաթուղթ – անձնագիր,

Ինքնակենսագրական,

Նախընտրական ծրագիր,

100 (հարյուր) Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների ստորագրությունների ցուցակ, ովքեր առաջադրում են նրա թեկնածությունը՝ որպէս Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավոր:

6. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուն գրանցման համար անհրաժեշտ վերոնշյալ փաստաթղթերը ուղարկելու է Խորհրդարանի պաշտոնական հասցեին՝ E-mail: parliamentwesternarmenia@gmail.com :

7. Արեւմտյան Հայաստանի Հանրապետության պաշտոնական կայքերում՝ www.elections-western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info հրապարակել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորության թեկնածուի հարցաթերթը հայերեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, թուրքերեն եւ արաբերեն լեզուներով:

8. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու համար պատգամավորության թեկնածուները պարտավոր են ունենալ Արեւմտյան Հայաստանի քաղաքացիություն եւ սահմանված կարգով գրանցուել վերոնշյալ պաշտոնական կայքերում:

9. Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պաշտոնական կայքում հրապարակել Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Մշտական հանձնաժողովների ցանկը, որպէսզի թեկնածուն հնարավորություն ունենա ընտրություն կատարելու Խորհրդարանի մեկ, կամ մեկից աւելի հանձնաժողովներում իր մասնակցությունն ապահովելու եւ գործունեություն ծաւալելու համար:

10. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների գրանցման գործընթացն իրականացնել 2018 թ. հուլիսի 1-ից մինչեւ ընտրությունների ավարտը՝ 2018 թ. սեպտեմբերի 5-ը ներառյալ:

11. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) ընտրություններին մասնակցելու ցանկություն հայտնած Արեւմտյան Հայաստանի քաղաքացիների գրանցումը կատարել վերոհիշյալ պաշտոնական կայքերում՝ www.elections-western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info:

12. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողով (Խորհրդարան) ձեւավորող Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) լիազորել կազմակերպել եւ անցկացնել ընտրական ողջ գործընթացը:

13. Ընտրությունների արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատվում եւ հրապարակվում է Արեւմտյան Հայաստանի Հանրապետության

հետևյալ պաշտոնական կայքերում՝ www.elections-western-armenia.info, www.parliament-wa.info, www.gov-wa.info, մինչև 2018 թ. սեպտեմբերի 15-ը:

14. Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի (Խորհրդարանի) 2-րդ գումարման 1-ին նստաշրջանը անցկացնել ընտրությունների ավարտից հետո, մեկ ամսվա ընթացքում:

15. Սույն հրամանագիրը հրապարակել Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) հետևյալ պաշտոնական կայքերում:

16. Սույն հրամանագիրը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռադիկ Խամոյան

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Նախագահ

01 հունիսի 2018 թ.